ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » «_____» 2025թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ի N 246-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի «Աուդիտորական ծառայություն ներգրավելու մասին» N 246-Ա որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված աուդիտորական ծառայության ձեռքբերման գործընթացը իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2025 թ. _____ « »

Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N 246-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու ավագանին սահմանված կարգով ներգրավում է աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևանի բյուջեից:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի N 246-Ա որոշմամբ Երևան քաղաքի ավագանին որոշել է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով ներգրավել աուդիտորական ծառայություն, հաստատել նույն որոշման 1-ին կետում նշված նպատակով ձեռքբերվող աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագիրը և առաջարկել Երևանի քաղաքապետին՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, «Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված բաց մրցույթի կիրառմամբ գնում կատարելու ձևով, կազմակերպել աուդիտորական ծառայությունների ձեռք բերման գործընթացը՝ նույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 10-ին հայտարարվել է ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/8 ծածկագրով բաց մրցույթ: Հայտարարված մրցույթին մասնակցել է միայն մեկ մասնակից, որը սակայն չի համապատասխանել գնման հրավերով նախատեսված պահանջներին, ինչի հետևանքով գնահատման հանձնաժողովի կողմից հայտը մերժվել է:

Գնման ընթացակարգի շրջանակներում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 03.02.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Հաշվի առնելով Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնելու նպատակով աուդիտորական ծառայություն ներգրավելու անհրաժեշտությունը, ժամկետների առումով գնումների մասին օրենսդրությամբ գնման այլ ձևերի կիրառման անհնարինությունը՝

Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 19-ի N 246-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ առաջարկելով Երևանի քաղաքապետին՝ նույն որոշման 1-ին կետով սահմանված աուդիտորական ծառայության ձեռքբերման գործընթացը իրականացնել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով՝ նույն որոշման 2-րդ կետով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

Առաջարկվող փոփոխության արդյունքում՝ հաշվի առնելով տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները՝ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունն ավագանու նիստում քննարկելու նպատակով աուդիտորական կազմակերպության կողմից ներկայացված ոսումնասիրությունների արդյունքները և եզրակացությունը ավագանուն կներկայացվի աուդիտորական ծառայության ավարտից հետո՝ գործող օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ